**Արձանագրություն N 3**
**«ՀԳԴ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

*ք.Երևան* «08» «փետրվարի» 2019թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Համբարձումյանը
Հ. Թադևոսյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գաբրիելյանը

**I. ՀԳԴ-ԷԱՃԾՁԲ-19/2 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գնահատման մասին**
(Հ. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- 01.02.2019թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման մասին եզրակացությունը սահմանված ժամկետներում տրամադրվել է:
- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 07.02.2019թ. գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
- Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել):
- Հանձնաժողովի կողմից լրացված գնահատման թերթիկներում Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը Մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ գնահատվել են բավարար:

**2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**
(Հ. Մարտիրոսյան)

Հանձնաժողովը որոշեց.

- Ընտրված մասնակից ճանաչել «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ–ին.

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը
- ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ______________ Հ. Մարտիրոսյան

Անդամներ՝ ______________ Կ. Համբարձումյան

______________ Հ. Թադևոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______________ Ա.Գաբրիելյան